Տնային օժանդակության ծառայության(IHSS) տվյալների խախտումների բարելավվում

Հունիս 26, 2012

Տնային օժանդակության ծառայության (IHSS)-ի 2012 թվականի Մայիսի 12-ի տվյալների պատահական խախտումների արված բարեփոխումների մասին: Այդ օրը, Կալիֆորնիայի դեպարտամենտի Սոցիալական Ծառայությունները (CDSS) հաշվետվություն ներկայացրին, որ անհատական տեղեկություններով, տվյալների առաքման խմբաբաժինը, սկսած 2011 թվականի Հոկտեմբրից մինչեվ Դեկտեմբեր ամիսների աշխատավարձի տվյալների կորել են:

Կալիֆորնիայի դեպարտամենտի Սոցիալական ծառայությունը(CDSS)-ը կատարվածի մասին հայտնեց նահանգային տեղեկատվության ապահովության պետական ծառայողին, եվ Կալիֆորնիայի մայրուղիների պահակախումբը նախաձեռնեց հետաքննություն: Պատահարը հետաքննվում էր նաեվ Միացյալ Նահանգների Փոստային ծառայությունում: Առ այսօր, այս պատահարի հետ կապված, տնային աջակցության ծառայության (IHSS) աշխատողների եվ ծառայություն ստացողների անհատական տվյալների չարաշահման ոչ մի դեպք չի գրանցվել: Ընդհանուր հետաքննությունների արդյունքում պարզվեց, որ գրանցումները հավանաբար ուղարկվել են Միացյալ նահանգների փոստային ծառայություն եվ ապահով ոչնչացվել: Կալիֆորնիայի Դեպարտամենտի Սոցիալական Ծառայությունը (CDSS) եվ այդ գործին մասնակից ծառայությունները, ստեղծել իրագործել են նոր բիզնեսային գործելակերպ, որը կապահովի լավագույն անվտանգությունը եվ կպահպանի մեր խնամակալների եվ խնամք ստացողների անհատական տեղեկությունները տեղափոխման ժամանակ:

Ի պատասխան կատարվածին, Կալիֆորնիայի Դեպարտամենտի Սոցիալական Ծաղայությունը(CDSS)-ը ուղարկել են մոտավորապես 750,000 ծանուցագիր նամակներ բոլոր հնարավոր տուժած անհատներին: Սկսած 2012 թվականի Մայիսի 12-ից Կալիֆորնիայի Դեպարտամենտի Սոցիալական Ծաղայությունը ունի գործող հեռախոսաբանկ պատասխանելու հեռախոսազանգերին եվ հարցերին հետեվյալ լեզուներով՝ Անգլերեն, Իսպաներեն, Ռուսերեն, Հայերեն, Չիներեն, Մանդարին, Թագալոգ: Լրացուցիչ տեղեկատվական նամակ եվ հաճախակի տրվող հարցերի քաղվածքը կդրվի Կալիֆոնիայի Դեպարտամենտի Սոցիալական Ծառայության (CDSS) կայքի էջերում բոլոր լեզուներով:

Նախազգուշացման համար, այնուամենայնիվ, Տնային օժանդակության ծառայության (IHSS) խնամակալները եվ սպառողները, եթե դեռ չեն դրել, պետք է որոշեն դնել անվճար, խարդախության տագնապ ազդանշան, իրենց կրեդիտային փաստաթղթերում, զանգահարելով ներքոհիշյալ համարներից մեկով:

TransUnion 1-800-680-7289

Experian 1-888-397-3742

Equifax 1-800-525-6285